

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՐՈՇՈՒՄ

----- 2018 թվականի N ----- Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 16-Ի
N 141-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 3.2-րդ մասը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի փետրվարի 16-ի «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար սահմանված ֆինանսավորման բարձրացված չափաքանակի սանդղակը՝ ըստ երեխայի կարիքի ծանրության աստիճանի սահմանելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 25-ի N 1365-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և 2011 թվականի հունվարի 27-ի N 46-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 141-Ն որոշման 4-րդ կետում՝

1) 3-րդ ենթակետից հանել «և Երևան քաղաքի, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության ենթակայությամբ գործող» բառերը.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 3.1)-ին ենթակետ «3.1) Երևան քաղաքի պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների վրա՝ 2019 թվականի հունվարի 1-ից,»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կրթության և գիտության նախարար Արայիկ Հարությունյան

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 16-Ի N141-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

Սույն նախագծի ընդունումը պայմանավորված է համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրման ժամանակացույցի փոփոխությամբ: 2016-2018 թվականների ընթացքում ՀՀ Սյունիքի, Լոռու, Տավուշի և Արմավիրի մարզերում արդեն իսկ ներդրվել է համընդհանուր ներառական կրթության համակարգը: Նշված մարզերում գործող հատուկ հանրակրթական դպրոցները վերակազմակերպվել են տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների, իսկ այդ հաստատություններում սովորող կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողները տեղափոխվել են մարզի հանրակրթական դպրոցներ: Համակարգի ներդրման արդյունքում, հանրապետությունում գործող նախկին 23 հատուկ հանրակրթական դպրոցներից 6-ը դարձել են տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոններ: Միաժամանակ նշված մարզերում ներդրվել է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար սահմանված ֆինանսավորման բարձրացված չափաքանակի սանդղակը՝ ըստ երեխայի կարիքի ծանրության աստիճանի:

Հաստատված ժամանակացույցով, համակարգի ներդրումը Երևան քաղաքում նախատեսվում էր 2018 թվականին (նախատեսվում էր առնվազն 4 տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների հիմնադրում՝ հատուկ դպրոցների վերակազմակերպման միջոցով): Սակայն, նկատի ունենալով այն հանգամանքը, որ Երևանը ամենամեծ համայնքն է, և հատուկ դպրոցները հիմնականում կենտրոնացված են Երևանում (գործող 17 հատուկ դպրոցներից՝ 11-ը), Երևանում համընդհանուր ներառական կրթության անցման ռազմավարությունը վերանայվեց՝ այն տեղափոխվեց 2019 թվական: Դրանով էլ պայմանավորված, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար սահմանված ֆինանսավորման բարձրացված չափաքանակի սանդղակի ներդրման ժամկետը 2018 թվականից տեղափոխվեց 2019 թվական: Նշված փոփոխություններն արդեն իսկ արտացոլվել են Հայաստանի Հանրապետության 2019-2021 թվականների պետական միջնա-ժամկետ ծախսերի ծրագրում (ՀՀ կառավարության 2018 թվականի հուլիսի 10-ի N 797 – Ն որոշում):

Առաջարկվող կարգավորման բնույթը

Հաշվի առնելով վերոգրյալը՝ մշակվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի փետրվարի 16-ի N 141-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

Նախագծերի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք

Նախագիծը մշակվել է ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի զարգացման ծրագրերի և մոնիթորինգի վարչության կողմից:

Նախագիծը տեղադրվել է հանրային քննարկման՝ իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական <https://www.e-draft.am/> կայքում:

Ակնկալվող արդյունքը

Նախագծի ընդունման արդյունքում նախատեսվում է 2019 թվականին ապահովել համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրումը՝ Երևան քաղաքի, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության ենթակայությամբ գործող պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում:

Համակարգի ներդրման արդյունքում Երևան քաղաքում՝

կձևավորվեն տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոններ՝ հատուկ դպրոցների վերակազմակերպման միջոցով,

կներդրվի մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների և երեխայի կրթության կարիքի գնահատման եռաստիճան համակարգը (դպրոցական մակարդակ՝ մանկավարժահոգեբանական աջակցության ծառայության կողմից, տարածքային մակարդակ՝ տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի կողմից, հանրապետական մակարդակ՝ հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի կողմից),

հանրակրթական դպրոցներում կներդրվեն ուսուցչի օգնականի և հատուկ մանկավարժի հաստիքներ,

կկիրառվի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար սահմանված ֆինանսավորման բարձրացված չափաքանակի սանդղակը՝ ըստ երեխայի կարիքի ծանրության աստիճանի,

վերակազմակերպված տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոններից կիրականացվի աշակերտների տեղափոխումը հանրակրթական դպրոց:

Նոր ձևավորված համակարգը հնարավորություն կընձեռի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունն ու դաստիարակությունը կազմակերպել առանց երեխային ընտանիքից անջատելու՝ ապահովելով նրա համակողմանի հասարակական զարգացումը և ներառելով նրան հանրակրթական ուսումնական հաստատություն: Ոլորտում իրականացվող քաղաքականության արդյունքում նախատեսվում է ընդլայնել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների որակյալ կրթություն ստանալու հնարավորությունները՝ ստեղծելով ներառական կրթության համակարգ բոլոր հանրակրթական դպրոցներում:

Նշված գործընթացով պայմանավորված՝ կպակասեն ներառական կրթությանը և հատուկ կրթությանը պետական բյուջեից հատկացվող գումարները, դրանք կուղղորդվեն մանկավարժահոգեբանական աջակցությունների տրամադրմանը երեք մակարդակներում և հանրակրթության մեջ ներառված կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպմանը:

ՏԵՂԵԿԱՆՔ

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 16-Ի N141-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ
ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ
ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի փետրվարի 16-ի N141-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ նորմատիվ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն առկա չէ:

ՏԵՂԵԿԱՆՔ

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 16-Ի N141-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ
ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՄԱՐՄՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԷԱԿԱՆ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ
ՆՎԱՋԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ**

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի փետրվարի 16-ի N141-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում եկամուտների և ծախսերի ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի փետրվարի 16-ի N 141-ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ շահագրգիռ մարմինների կողմից արված առաջարկությունների մասին

h/h	Առարկության, առաջարկության հեղինակը, գրության ամսաթիվը, համարը	Առաջարկության բովանդակությունը	Եզրակացությունը	Կատարված փոփոխությունը
	1	2	3	4
1.	<p align="center">Երևանի քաղաքապետարան</p> <p align="center">2018-08-03 N01/07-55758Հ</p>	<p align="center">Առաջարկվում է նախագծի 1-ին կետի 2-րդ ենթակետում «2019 թվականի հունվարի 1-ից,» բառերը փոխարինել «2019 թվականի սեպտեմբերի 1-ից,» բառերով:</p>	<p align="center">Ընդունված չէ, քանի որ ՀՀ պետական բյուջեով նախատեսված է 2019 թվականի հունվարի 1-ը:</p>	
2.	<p align="center">ՀՀ ֆինանսների նախարարություն</p> <p align="center">2018-08-10 N01/9-2/14498-18</p>	<p>Նախագծի 1-ին կետի 2-րդ ենթակետում և «ՀՀ կառավարության 2016 թվականի փետրվարի 18-ի նիստի N 6 արձանագրության 12-րդ կետով հավանության արժանացած արձանագրային որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» կառավարության արձանագրային որոշման նախագծում առկա է Երևան քաղաքի հանրակրթական ուսումնական հաստատու-</p>	<p>«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի համաձայն, նախկինում ընդունված արձանագրային որոշումներում փոփոխություններ չեն կատարվում:</p>	

		թյուններում համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրման ժամկետների անհամապատասխանություն: Առաջարկվում է համապատասխանեցնել նախագծերով նախատեսված ժամկետները:		
3.	ՀՀ արդարադատության նախարարություն 2018-09-10 01/622054-18	«ՀՀ կառավարության 2017 թվականի փետրվարի 16-ի N 141-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը համապատասխանում է ՀՀ օրենսդրության պահանջներին:		

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 16-Ի N141-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ և ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(<https://www.e-draft.am/>)

h/h	Առարկության, առաջարկության հեղինակը, ստացման ամսաթիվը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացությունը	Կատարված փոփոխությունը
	1	2	3	4
1.	Շուշանիկ Սահակյան 05.08.2018 12:04:28	Կխնդրեի վերապատրաստման գործընթաց իրականացնել, ներգրավելով Տավուշի մարզի դպրոցների բազմամասնագիտական թիմի փորձը, բայց ոչ «Հույսի կամուրջ» ՀԿ-ի փորձն ու վերապատրաստումները:	Առաջարկությունը բուն նախագծին չի վերաբերվում, այլ վերաբերվում է ծրագրի իրականացմանը:	Փոփոխություն չի կատարվել: